ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հոկտեմբերի 2024 թվականի № 401-Ա

ՄԱՐԻ ԲԱԼՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2024 թվականի հոկտեմբերի 8-ի № 01 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Մարի Բալյանին*** 2024 թվականի հոկտեմբերի 13-ից 18-ը ներառյալ, վեց օրով գործուղել Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝ «Մինդրեյ» ընկերության կողմից կազմակերպվող աշխատաժողովին մասնակցելու համար:

2. ***Մարի Բալյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության տնօրենի արտահիվանդանոցային ծառայության գծով տեղակալ ***Մելինե Ներսիսյանի*** վրա:

3. Ընդունել ի գիտություն, որ ***Մարի Բալյանի***՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն գործուղման հետ ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2024 թվականի հոկտեմբերի 9
ք. Հրազդան